սաստեաց նոցա 'ի պատուհանէ անտի, և հրամայեաց գրել զանուանս ստահակաց և ցուցանել Կառավարութեան, եւ հասեալ Թարգմանն վերստին ցրուեաց զնոսա, եւ զորդի քահանային աքսորեաց Եէնիչէրի Աղասին, եւ Թէոդորոս Պատրիարք կազմեաց ժողով մեծ 'ի միաբանաց և յուխտաւորաց՝ հարցանել ցխուժանն՝ թէ զի՞նչ կամիցին, եւ նոքա այլ և այլ բանիւք զմիմեանս մեղադրէին, եւ հանդարտեալ ցրուեցան։ Իսկ Դիոնէսիոս վարդապետ որ 'ի գրի հարեալ է զայսոսիկ՝ զանուանս գլխաւոր խռովչաց չէ կամեցեալ յայտնել, այլ թողեալ է յայտնիլ 'ի Տիեզերական ատենին եւ ինքն կամէր հրաժարիլ 'ի գործոյն, այլ 'ի յորդորանաց ոմանց՝ վերստին յանձն առ վաստակիլ 'ի փառս Աստուծոյ և 'ի պատիւ ազգին Հայոց։ Թէոդորոս Պատրիարք գրեաց պատասխանի թղթոյն Պողոս վարդապետի, յորում ասէ՝ Թարգման Աւետիսն վաստակի 'ի ժողովս Դատարանի, 'ի Ս. Յարութիւն ընդ Փոխանորդին և ընդ Դիոնէսիոս վարդապետին, այլ վասն դատաստանական գործոց՝ մեկնութեան և բացատրութեան բառից և խմաստից հրովարտակաց, և առանձին երթեւեկութիւն առ Դատաւորս Դիոնէսիոս վարդապետն կատարէ հաճութեամբ Խորհրդականաց, գոլով տեղեակ ամենայն եղելութեան. եւ Գէորգ Պոտուռ առաւել քան զմեզ վաստակէր 'ի պատշաճաւոր գործս։

Ո՛վ արդեօք առ նախանձու զայլ և այլս ցուցեալ է սիրոյդ՝ միթէ Դիոնէսիոս զփառս անձին իւրոյ խնդրելով, այլոց չմիջամտել ասացեալ է. զի նա զնիհարութիւն եւ զտկարութիւն անձին իւրոյ 'ի բաց եդեալ, անդադար գնայր 'ի հարկաւորեալ տեղիս և վաստակէր, թէպէտ ցաւ եղեւ նմա, այլ չհանեալ 'ի վեր. վաստակեցաւ եւ վաստակի, մինչեւ գործն 'ի գլուխ ելցէ։ Ոմանք յաչաղկոտք 'ի խորհրդակցաց մերոց 'ի գրոյդ նիւթ եւ զորութիւն առեալ, յարուցին աղմուկս և չփոթ 'ի վերայ նորա, մինչեւ յայտնի աղաղակել թէ կաշառեալ 'ի Ցունաց արար նենգութիւն ազգին և հայրենի ժառանգութեան, տուք 'ի ձեռս յօշել զնա. Թարգմանն միայն ձեռնամուխ լիցի գործոյն. զայս ասէին, որք զԴիոնէսիոս ոչ ճանաչէին, որպէս յետոյ խոստովան եղեն. առաջնորդ ամբոխին աք-